

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն (Բադ Հոֆգաստայն), 2019 թվականի հոկտեմբերի 1-3

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային գրասենյակ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրոպական առողջապահական համաժողովին:

Համաժողովը նպատակաուղղված էր առողջապահության ոլորտում կոռուպցիայի դեմ տարվող աշխատանքներին, առողջապահության համակարգում վստահության մթնոլորտի՝ ոլորտում առկա անհավասարությունների հարթման կարևոր գործոններից մեկի ձևավորման հարցերի քննարկմանը, աղքատության նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքին և այլն:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու առողջապահության ոլորտում քաղաքականություն մշակողները, հասարակական կազմակերպությունները, գիտական ու գործարար շրջանակների ներկայացուցիչները:

Համաժողովին շեշտադրվել են առողջապահության համակարգում վստահության մթնոլորտի ձևավորման, անհավասարությունների հարթման,

ֆինանսական մեխանիզմների կանոնակարգման և աղքատության նվազեցման ուղղությամբ երկրներում տարվող աշխատանքները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համընդհանուր առողջապահական ծածկույթին (ՀԱԾ) հասանելիություն ապահովելու վերաբերյալ գեկույցով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանը:

Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցված հաջողությունները, ՀԱԾ վերաբերյալ Հայաստանի կողմից իրականացվող ծրագրերը: Զեկույցի ընթացքում անդրադարձ է կատարվել ՀԱԾ հասանելիության ապահովման հետագա քայլ-անելիքներին:

Այցի ընթացքում կայացան մի շարք, այդ թվում՝ երկկողմ հանդիպում ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանի և Եվրոպական առողջապահական համաժողովի նախագահ պարոն Կլեմենս Մարտին Աուերի միջև: Հանդիպման ընթացքում քննարկվեցին առողջապահության ոլորտի ներկայիս բարեփոխումների ընթացքը, արժարժվեցին առողջապահության նախարարության առաջնահերթ ուղղությունների կյանքի կոչման առկա խնդիրների և հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակներում Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը կիսվեց առողջապահության ոլորտում արդարության վերաբերյալ իր կատարած աշխատանքների արդյունքներով, ըստ որոնց՝ գոյություն ունի վեց մակրոտնտեսական քաղաքականություն, որը կարող է 2-4 տարվա ընթացքում նվազեցնել անհավասարությունները առողջապահական ոլորտում: Հրավիրող կողմը մասնակից երկրների ներկայացուցիչներին տրամադրեց ուղի-ապացույցներ՝ ցույց տալով, թե ինչպես կարելի է հասնել վերոհիշյալ խնդիրների արդյունավետ լուծման:

Համաժողովի մասնակից տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X

2019 թ. հոկտեմբերի 10